ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 48- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 24-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության և փրկարարական ծառայողի, քաղաքացիական ծառայողի, վարչական ու հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի, գրասենյակի, կազմակերպության և հիմնարկի ղեկավարի, առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի վկայականների նկարագրերը, ձևերը և տրամադրման կարգերը սահմանելու մասին» N 24-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ լրացումները.

1) վերնագրում և 1-ին կետի 3-րդ ենթակետում «առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի» բառերից հետո լրացնել «, գլխավոր քարտուղարի օգնականի» բառերով.

2) հրամանով սահմանված 3-րդ հավելվածի վերնագրում և ամբողջ տեքստում «առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի» բառերից և իր համապատասխան հոլովաձևերից հետո լրացնել «, գլխավոր քարտուղարի օգնական» բառերը՝ ըստ համապատասխան հոլովաձևերի.»:

3) հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ և 23-րդ կետերում «բացառությամբ առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի» բառերից հետո լրացնել « և գլխավոր քարտուղարի օգնականի վկայականի)» բառերով.

4) հրամանի 3-րդ հավելվածը լրացնել նոր 23.2-ին կետով հետևյալ խմբագրությամբ.

«23.2. ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի օգնականի վկայականի կորստյան, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում նա անմիջապես դիմում է ներկայացնում ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

29.07.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ